

ԵՆԵՔԱՆԷ



4

(187)
Ապրիլ, 2022

ՄՆԱԼ ԱՐԵՎԱԳՈՒՅՆԻ ՆԵՐՍՈՒՄ

Ողգա Հովհաննիսյանի հարցազրույցը նկարչուհի, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Գյումրու պատվավոր քաղաքացի Սուսաննա Սկրտչյանի հետ

-Սուսաննա Սկրտչյանը ժամանակի ափի մեջ, կամ ժամանակը նրա նկարչարվեստում ինչպե՞ս է արտահայտվում:

-Կարող է տարօրինակ հնչել, բայց ժամանակի իմ չափորոշիչներն այլ են. ժամ չէ, օր չէ, տարի չէ, այլ մի տարածք, որտեղ ես փութաբայլ ընթանում եմ կամ արագ վազում՝ կամեմալով բռնել ժամանակի քղանցքից, դանդաղեցնել նրա ընթացքը, քանզի այն միշտ չի հերիքում:

-Ձեզ համար՞ում եք ճակատագրի սիրելին:

-Ճակատագիրն ինձ հետ հաշտ է քայլում, ինքս էլ հաշտվող եմ, էլք փնտրող, հարվածներին (իսկ դրանք քիչ չեն) դիմակայող, երբեմն հաղթանակած եմ լինում, երբեմն տխուր (ո՛չ հուսահատ, ո՛չ կոտրված), բայց ինչպես ասում են՝ ճակատիդ գրվածը ո՛չ մաքրել կլինի, ո՛չ սրբագրել:

-Ի՞նչը կանխորոշեց ընտրել այն ճանապարհը, որ Ձեզ դարձրեց անհատականություն: Դիպվածը երբևէ կարո՞ղ էր որոշել Ձեր կյանքի ու ստեղծագործական արարումների ընթացքը:

-Դիպվածը երբեք անսպասելի չի լինում. այն ճակատագրի սերտ բարեկամն է: 1977 թվականին հանդիպումը Հենրիկ Իգիթյանի հետ, անշուշտ, կանխորոշեց իմ կյանքի ճանապարհը՝ այն հարթելու ճիշտ պահին: Այդ հանդիպումը դարձավ իմ երազանքների իրականացման երաշխավորը, հետագայում նաև ուղղորդեց իմ ստեղծագործական ընթացքն ու գործունեությունը: 1978թ. հիմնադրեցի Գյումրու գեղագիտության կենտրոնը՝ մինչ այժմ հազարավոր մանուկների համար ճանապարհ բացելով դեպի արվեստի զարմանահրաշ աշխարհ:

-Ստեղծագործական ներշնչանք - գաղտնիք. ինչպիսի՞ն է, ե՞րբ է հայտնվում, ի՞նչ է շճնջում Ձեր ակամջին և ո՞ւմ շուրթերով...:

- Ստեղծագործելն աստվածային շնորհ է, և բնական է, որ բոլորին չի տրվում: Այն ստեղծագործողի սրտի ու հոգու, ցանկությունների արտահայ-

տությունն է, որ դառնում է գույն, հնչյուն, ձև... Ներշնչանքը գալիս է անսպասելի, հուշիկ քայլերով՝ մոռանալ տալով քեզ շրջապատող ամեն ինչ. դու մնում ես քո ստեղծած աշխարհում, քո մտքերի, քո ստեղծելիք ծնունդին սպասող: Այդ պահի արարիչը դու ես, դու և քո աշխարհը: Դա քո մենախոսությունն է, իսկ շուրջդ պտտվող հրեշտակներն աննկատ շճնջում են՝ դու արարում ես... դու արարում ես:

Երբ ընդհատվում է կապը Աստծո հետ, նոր գործիք ծնունդը կիսատ է մնում կամ լիարժեք չի լինում: Երբեմն լինում է և այդպես, երբ զայրացած ես լինում այս աշխարհի դեմ, անարդարության, ստի, կեղծիքի ու չարականության դեմ: Բայց, այնուհանդերձ, վերադառնում ես դեպի Աստված, քանի որ Նա քո մեջ է, քո խիղճն է և բարոյականությունը, քո սերն է երկրիդ, բնության ու մարդկանց հանդեպ: Ու Աստծուն գտնելու իմաստությունն ու խորհուրդը բաց չեն թողնում քեզ...:

-Ի՞նչ երազներ ու տեսիլներ են Ձեզ այցելում, և դրանք ինչպե՞ս են արտահայտվում Ձեր ստեղծագործություններում:

-Երազները, եթե հաջողվում է քնել, այլաշխարհիկ ազդակներ են, որ հարստացնում են քո իրականությունը...

Երազներ են պատվիրում, աշխատում կիսատ գործերի վրա, շարունակում են ընթերցել կիսատ կարդացած գիրքս և վերադառնում եմ... ժամանակի սլաքը երազում միշտ հետ է պտտվում: Հարազատներս են գալիս այցելության, մանկության թաղը, ընկերներս, որոնց միայն երազում կարող եմ հանդիպել: Երբեմն այնքան երանելի հուշեր են արթնանում, որ չես ուզում փոխել իրականության հետ, ուզում ես կտրվել ամեն ինչից, որ կատարվում է շուրջդ, և մնալ երազում:

- Ամեն օր արարել գեղեցիկը ու տեր կանգնել դրան... Կարծում եմ ամեն բացվող առավոտ այս մտայնությամբ եք մտնում արվեստանոց: Իսկ դուրս ելնելիս ի՞նչ խոհեր եք ունենում:

-Արվեստանոցի ճանապարհը լի է նոր մտքերով ու մտահղացումներով. գնում ես արագաբայլ՝ երկուդեղծով, թե կկորցնես մտքումդ հենց նոր ծագած ձևը, գույնը, երաժշտությունը, այո՛, երաժշտությունը, որովհետև քո մեծ թեման զարգանում է երգի պես, բանաստեղծության տողի

պես՝ քիչ միջոցներով բան ասելու միտումով: Վերադա՞րձը... Վերադառնում ես հաճելիորեն հոգնած, երբեմն բավարարված քո արածով, երբեմն քեզանից դժգոհ կամ այն հաճելի զգացումով, որ վաղը նորից դառնալու ես՝ կիսատ գործը ավարտելու համար:

-Եթե հանդիպեիք Աստվածամորը, ի՞նչ կպատմեիք նրան, որ մի պատումով կամ սյուժետով ճանաչեիք Սուսաննա Սկրտչյան հայուհուն:

-Հանդիպում Աստվածամոր հետ... Ես հաճախակի եմ հանդիպում իմ նկարներում, իմ խոհերում, իմ աղոթքներում: Ես միշտ դիմում եմ Նրան: Խնդրում եմ համբերություն այն մայրերի համար, որ կորցրել են իրենց լուսավոր զավակներին, խնդրում եմ պահել ու պահպանել իմ երկիրը, ողջ հողագունդը, իր մայրական ջերմ սերը բաշխել բոլորին՝ մեր ժամանակների այսքան չարությունից ազատվելու համար:

-Նկարչուհի Սուսաննա Սկրտչյանի համար կա՞ արդյոք արվեստով (արվեստում) չիրականացած որևէ երազանք ու գաղափար...:

-Արվեստում, ստեղծագործական կյանքով լի ու դրանով ապրող մարդուն բնությունը այդքան ժամանակ չի տալիս բոլոր երազանքներն ու գաղափարներն իրականացնելու, քանի որ դրանք ծնվում են ամեն վայրկյան... Երբ զգացիր, որ ամեն ինչ արել ես, ուրեմն արդեն հրաժեշտի ժամն է, պիտի գնալ...

-Արդի իրականությունը փոխելու համար ո՞րն է ստեղծագործողի Ձեր բարձրագույն դերը:

-Ստեղծագործողն ինչքան էլ խորը, այնուհանդերձ միշտ մնում է միամիտ երեխայի նման, նա մեծ երեխա է և կարծում է՝ իր արևային, լուսավոր ու բարի գործերով կփոխի աշխարհը, ու այն կդառնա բարի, սիրող, հանդուրժող, խաղաղասեր... Նա աշխատում է լույս սփռել վատ երևույթների վրա, ի վերջո փոխել աշխարհի դեմքը:

-Ձեր ափսոսանքն ի՞նչ գույնով է, իսկ անոթը՞նձր... Ձեր ներկայակակի մայր գույնը ո՞րն է և ի՞նչ գործով է իր թևի տակ առնում մյուս գույներն ու երանգները: Ո՞րն էք համարում ասողխոսող գույն:

-Իմ ներկայակակը վառ է կար-

միրների, դեղինների, կանաչների, դարչնագույնի, իմ Շիրակ աշխարհի գույների սրտով, մեր քարերի նվազով, մամուռների, հասած արտերի ծփանքով. այդ երանգներն իմ արյան մեջ են, իմ երակների: Ուրախությունս պայծառ արևագույնն է՝ բոլոր նրբերանգներով, տխրությունս՝ հոգնած ու թաց հողը՝ իր դարչնագույն սևով: Եթե այս գույները չբոլորվեն, նկարը ինձ չի լինի. արև, լույս, ջերմություն, մութ, որի մեջ էլ ես միշտ լույս եմ փնտրում ու գտնում եմ: Ամենախոսուն գույնը վառ մարմնագույնն է, արևագույնը, և սա է ամոթողը՝ մնալ այս գույնի ներսում...:

-Ճի՞շտ է, որ վրիպումները, երբեմն նույնիսկ պարտությունները մեզ նախապատրաստում են հաղթանակների հետ հանդիպման...:

-Եթե դու քո բնույթով պայքարող ես, ձգտում ես հասնելու քո իմացած ճշմարտությանը և համառորեն հասնում ես դրան, ըստ էության, հաղթելու ես: Եվ ամեն վրիպում, երբեմն նույնիսկ պարտություն շատ հաճախ նախապատրաստում են մեզ հանդիպելու հաղթության:

-Ձեր նկարներն ու քանդակները խոսո՞ւմ են ձեզ հետ, երբ ելուդիներ եք որոնում:

-Նկարներիս հետ զրուցում եմ արարման ընթացքում, համոզում եմ նրանց, ընկերանում հետները, սիրում, մինչև իսկ այնքան սիրում, որ նրանցից բաժանվելն անչափ դժվար է դառնում:

-Երեք բառե հմայիլներ, որ կասեիք դժվար պահերին, և կունենար «Սեզան, բացվիր»-ի նշանակություն:

-Համբերություն, սեր, համառություն. սրանք են այն բառ-հմայիլները, որ ամբողջ կյանքում ուղեկցել և ուղեկցում են ինձ որպես յուրօրինակ «Սեզան, բացվիր»:



Զրուցեց
Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

«ՄԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԱԴՐԱՏՈՄՍԵՐԸ

Հայ էպոսը մեր ուղն ու ծուծն է դարձել, մեր հոգևոր ու կենսական ամբողջությունը, մեր նշանագիտական տարածքը՝ որպես ազգային ինքնության դիմապատկեր ու փրկության տապան:

Վերջերս Գյումրու թիվ 1 ավագ դպրոցում /տնօրեն՝ Նաիրա Թադևոսյան/ տեղի ունեցավ Աշակերտական համալսարանի և Հայաստանի համալսարանի միջնակարգ դպրոցի, Վաղարշապատի թիվ 5 դպրոցի, Նոր Հաճընի թիվ 2 ավագ դպրոցի, Արմավիրի թիվ 1 ավագ դպրոցի աշակերտները: Ընթերցվեցին 19 զեկուցում՝ «խորհրդանշային համակարգը էպոսում», «Մեսրոպյան այբուբենն ու «Մասնա ծներ» էպոսը», «Ջրի պաշտամունքի արտացոլումը էպոսում», «Ջուզորդուններ հայոց և շունթրաքաղական էպոսների միջև», «Մասնա ծներ» դրուցագներիցում պատմական հիմքերը», «Ամունսաղնուտանեկան հարաբերությունների առանձնահատկությունները էպոսում» և այլն:

Մասնագիտական ժյուրին ու փորձագետները բարձր գնահատեցին աշակերտների պատրաստվածությունն ու նվիրումը ազգային արժեքների հանդեպ: Ընթերցումներն ուղեկցվում էին էպոսի բնականացված դրվագներով, ազգային, ազգագրական երգերի կատարմամբ՝ յուրօրինակ ոգեղենացման խորհրդով: Կազմխորհրդի անդամ, բանաստեղծուհի Ռոզա Յովհաննիսյանն իր գնահատականի խոսքում սիմվոլիկ նշեց, որ էպոսին նվիրված օլիմպիական խաղերի մեկնարկը, կարելի է ասել, տրվեց Գյումրիում՝ թիվ 1 դպրոցում:

Մեր ընթերցողներին ենք ներկայացնում աշակերտական զեկուցումներից մեկը:

Հայոց դրուցագնավեպում բոլոր ծներին բնութագրող մի հստակ բանաձև կա. «Թե խալի տարով կը ջոջան, էնոնք օրով ջոջացան»: Մեր ծների համար տեղին է հիշել «Կախարդական լավաշը» մուլտիմեդիայի տողերը. «Հայոց լեռնոտ աշխարհում տղաները շուտ են դառնում չափահաս ու մոռանում իրենց մանկական խաղերը»: «Մասնա ծներ» էպոսում տրվում են ջոջանալու բոլոր բանաձևերը, որոնցից առաջինը Մասնա աշխարհի ուտելիքներն ու ազգային կերակրատեսակներն են, որոնք հերոսներին դարձնում են աշուտ-ժասիրտ և արիասիրտ դրուցագուցներ:

Մեր անդրադարձում ուսումնասիրվել են հայկական էթնիկ կերակրատեսակները, որոնք, սերնդեսերունդ փոխանցվելով հասել են մեզ, և այսօր էլ զարթոնում են մեր ճաշացանկը և գալիս են ապացուցելու մի պարզ ճշմարտություն, որ մեր խորտկագիտական մշակույթը գալիս է դարերի խորքից և նորովի մատուցմամբ չի հնանում երբեք:

«Մասնա ծներ» կամ «Մասունցի Դավիթ» էպոսը հայ ժողովրդի (հիմնականում սասունցիների, մշեցիների, ալաշկերտցիների և այլն) ու դրուցագուցների կյանքի, սովորույթների և սովորույթ-յունների մեծ հանրագիտարան է: էպոսում դրուցագուցները աչքի են ընկնում իրենց զորեղ ուժով: Այդ հզորությունը նրանք ստանում էին հայկական ավանդական ուտեստներից: Օրինակ՝ էպոսում նշվում է Սանասարի և Բաղդասարի շատակերությունը՝

Էտ երկու աղպեր օրական մեկի տանը պտի հաց ուտեին:
Էտոնց ուտվածք մեկ հայվան, մեկ ոչխար է,
Իրեք լիտր (մոտ 14,7 կգ) հաց, իրեք լիտր գինի,
Իրեք լիտր բրինձ, իրեք չարեք (քառորդ) յեղ,

Մեկ դամվա (անգամ) ուտվածք: /*Բոլոր օրինակները բերվել են համահավաք բնագրից:
Ինչպես տեսնում ենք, երկու եղբայրները սիրում էին ուտել մսի տարբեր տեսակներ և յուղ ու բրինձ և վայելել հայոց անապակ գինին: Հետաքրքիր է, որ էպոսում մեր հերոսներից Սասունցի Դավիթն դիմում էին պլեճկեր, պլեճկերի տղա, շաղգմանկեր մակա-նուններով: Պլեճը բերքահավաքից հետո մնացած չգարգացած արմտիք է (կարտոֆիլ, շաղգամ, սոխ, ձմերուկ և այլն), որ հավաքում են աղբատները: Դավիթն ասում են պլեճկերի տղա, երբ նա մտնում է ուրիշի արտը ու որս է անում, օրինակ՝

Մեկ քասիք մարդ, յոթ կորի կորեկ էր ցանե,
Ջրեր էր, ելել էր՝ ջուր կտրե:
Դավիթ առավ ծին, մտավ մեջ,
չորս կորին ավերեց:
Տերն եկավ ասեց.- Շան որդի պլեճկերի տղա,
Բեռ մի դեք (փոշի) քու փոր չի կշտացնի:

Հաջորդ կերակրատեսակը, որի մասին խոսվում է էպոսում դավալուման է տիպը: էպոսի հերոսներից Մեծ Սիեթը որսն անելուց հետո միսը բաժանում էր նաև ժողովրդին (այստեղ նաև երևում է մեր դրուցագուցների մեծահոգությունը), և նրանք այդ մսից պատրաստում էին դավալումա, օրինակ՝

Աշուն նեճիր (որս) ջարդեց, ամեն տան յոթնեճիր հասավ,
Ըմեն արին դավալումա,
Սիեթին օրինեցին:

Այսպիսին է հայկական դավալումայի պատրաստման եղանակը. տավարի կամ ոչխարի միսը լավ վաճում են, լցնում ծակոտկեն ամանի մեջ մինչև լավ քամվելը: Այնուհետև եփում են, կրկին քամում, ապա, անջատելով խոշոր ոսկորները՝ միսը տապակելով կարմրեցնում են մսաջրի երեսից հավաքած յուղի մեջ: Լցնում կավե կամ արծնապատ ամանի մեջ, լավ սեղմում ու շերտերին ավելացնում էին հալած յուղ, առաջներում հալած դմակ: Տավարի միսը պարունակում է սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, վիտամին C, B6, D, B12, երկաթ, մագնեզիում, կալցիում: Օգտակար է սակավարյունության (անեմիա) դեպքում: Տա-

վարի լյարդը օգտակար է միգրացիային հիվանդության և սրտի կաթվածի դեպքում:

էպոսում պատրաստվում է նաև ժաժիկ: ժաժիկը աղբատի ուտելիք է, որով ճապաղջուրցիները ուզում էին խաբել Դավիթն ու հարկ չվճարել, օրինակ՝

Դավիթ քասիքեր ի, երեխա, տղա ի,
Մի քանի տիկ ժաժիկ,
Մեկ քանի կոլիկ ոչխար տանք թո էթա:

ժաժիկը գրեթե նույն կաթնաշուն է: Պատրաստվում է այծի կամ ոչխարի կաթից: Երբ կաթից պանիր էին ստանում առաջացած շիճուկը եռացնում են, ապա լցնում կտորից պարկի մեջ և քամում: ժաժիկը պարունակում է 14-18% սպիտակուցներ, այն հարուստ է մեթիոնինով, որը անփոխարինելի ամինաթթու է, պարունակում է վիտամին A, E, P, B2, B6, B12, հարուստ է ֆոլաթթվով, կալցիումով, մագնեզիումով, ցինկով, պղնձով: Այն հեշտացնում է մարսողությունը, նվազեցնում է խոլեստերինի քանակը, կանխում է լյարդի մեծացումը:

էպոսում պատրաստվում էր նաև ավանդական հարիսա, որը Դավիթ սիրելի կերակուրն էր: Հարիսա պատրաստում էին «Ցասման ժամին», երբ բնական աղետներից պաշտպանվելու համար գյուղացիներն ուխտ էին գնում սրբավայր, մատաղ անում, եկեղեցու բակում պատրաստում հարիսա, քեֆ ու ուրախություն անում, օղի խմում: Եվ Դավիթը հորթարածության ժամանակ իմանում էր այդ մասին, գնում է ու հարիսա բերում իր հորթարած ընկերների համար, օրինակ՝

Գնաց, որ ժամից հեկած են,
Որ գան նստին խարիսա ուտեն.

Պառվներ առած են յեղը, խարիսեն ու խացը,
Կանգնած են, որ լցնեն, ուտեն:
Դավիթն եկավ, պառվին գոշտեց,
Աղն ու յեղը լցրեց խարիսի մեջ,
Կոպալը օգեց, քառնեց, խանեց, զարկեց կանթի մեջ,
Դրեց թևին, խացն էլ զարկեց դուրսը, գնաց:

Հարիսայի բաղադրատոմսը նույնն է, չի փոխվել, այդ կերակուրը այսօր էլ սիրով վայելում են բոլորը, ի դեպ, հանճարեղ Վարպետի Իսահակյանի ամենասիրելի ճաշատեսակը եղել է հարիսան, որը սիրով պատրաստել է տիկին Սոֆիկը՝ ամեն անգամ բաժին հանելով Չարենցին: Բաղադրատոմսը հետևյալն է. ծավարը և հավի, ոչխարի կամ տավարի միսը ջրով եփում են փայտե թիակով հարելով մինչև մածուցիկ զանգված դառնալը: Ուտելիս վրան լցնում են հալած յուղ: Եփում են կճուճի մեջ, թոնրում թողնելով ողջ գիշեր: Հարիսայի բաղադրությունը մեջ պարունակող ծավարը օգնում է վերականգնելու կոլագենի անբավարար քանակը օրգանիզմում, ամրանում են մաշկը, մազերն ու եղունգները: Հավի միսը լավ է մարսվում, այն դիետիկ է, պա-

րունակում է վիտամին B կոմպլեքս, որը լավ է ազդում նյարդային և մարսողական համակարգի վրա, իսկ ֆոսֆորը ամրացնում է մկանները, ոսկորները և ատամները: Ուշագրավ է, որ կերակուրները քաջ դրուցագուցներին նաև զորություն և ուժ են տալիս: Դավիթը Մելիքի հետ կովից առաջ ուխտ էր անում, որ նրա հետ պետք է կովելուց առաջ գառով ու բրնձով փլավ ուտի, ինչպես՝

Յոթ օր գառու միս, բրինձ փլավ չուտիմ,
Սարա Մելիքի հետ կով չեն ենի:

Մեկ այլ պատումում Դավիթն ասում է Քեռի Թորոսին.

Իդա անգամ Դավիթ եկավ,
Խըստ երեց, գնաց Սարա Մելիքի վրեն.

Եկավ, որ ահագին ասգար ժողվեր են ու նստեր սեղան սրու գոտին.

Դավիթ ասաց. «Ուխտ եղնի, չուրի ես բրինձ փլավ չուտեմ, կով չենեն:

Ահա այսպիսին է «գորավոր» փլավի բաղադրատոմսը. գառան միսը մաքր կտրատել, ավելացնել աղ ու պղպեղ: Այդ ամենը տապակել յուղի ու կտրատած սոխի մեջ: Տապակել այնքան, մինչև միսն ու սոխը դառնան ոսկեգույն: Հետո ավելացնել այնքան ջուր, որ միսը ծածկվի: Ապա ավելացնել նաև հատիկներ ու ծածկել թավան: Պետք է եփել այնքան, որ միսը փափկի: Հետո վաճառ բրինձը 3-4 անգամ: Լվացած բրինձը ավելացնել մսին ու եփել 30 րոպե: Բրինձը նվազեցնում է օնկոլոգիական հիվանդությունների առաջացման վտանգը, լավ է ազդում սրտանոթային համակարգի վրա, օգտակար է խոցային հիվանդությունների ժամանակ, բարելավում է ուղեղի աշխատանքը: Գառան միսը պարունակում է վիտամին B կոմպլեքս, սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր: Երկրորդ ճեղքումից անջատվում է կրկնակի շատ էներգիա, քան սպիտակուցների ու ածխաջրերի ճեղքումից: Սասունցիների ամենասիրելի տոններից է Սուրբ Սարգիսը: Տոնի սեղանի ամբաժանելի մասը փոխինձն (փոխինդ) և աղանձն են: Պատրաստվում է հետևյալ կերպ. զարու կամ ցորենի հատիկները բովում են ու աղում: Ստացված զանգվածը քիչ քանակությամբ ջրով եփում են մինչև քանձր զանգված ստանալը: Հետո վրան ավելացնում են յուղ ու թան: Աղանձ. ցորենը կամ կարմիր ծավարը տապակի վրա բովում են (առանց յուղի): Բովված ցորենը լցնում են տարայի մեջ և սրբիչով փակում: Հետո ավելացնում են մեղրով օշարակ, չիր, չամիչ:

Հայ դրուցագուցները ուժ ու կորով էին ստանում իրենց հողից ստացված ու հայ կանանց ձեռքով պատրաստված ուտեստներից: Սասունցի Դավիթի համար Սարա երկրի սնունդը կենարար չէր ու Դավիթը սնվում էր միայն հայոց աշխարհի մեղր ու կարագով:

Թող էլնի, էթա Սիեթ տուն,
Գնա բեռ մի մեղր բերի,

Գնա բեռ մի կարագ բերի, կը շինես եղ-մեղր, կը տաս, տղան կուտի:
Մերով, կարագով Դավիթն պահեց Իսմիլ խաթուն:
Թե ուրիշ տղեք տարով կը մեծանա,
Դավիթ օրեօր կը մեծանար:

Մեղրը քաղցր, մածուցիկ, բարձր կալորիականությամբ սննդամթերք է: Մեղրի հիմնական բաղադրիչը յուրացվող ածխաջրերն են՝ խաղողաշաքարն ու պտղաշաքարը, որոնց պարունակությունը հասնում է 70%-ի, ինչի շնորհիվ մեղրը հեշտ է մարսվում: Մեղրի կարևոր բաղադրամասերից են օրգանական թթուները, ֆերմենտները, վիտամինները, կարոտինը (A-նախափիտամին): Մեղրն ունի նաև բուժիչ հատկություն և լայնորեն կիրառվում է ժողովրդական բժշկության մեջ՝ մրսածության, ստամոքսաղիքային, սիրտ-անոթային և այլ հիվանդությունների ժամանակ: Շաքարի բարձր պարունակության շնորհիվ մեղրի մեջ մանրէներ չեն բազմանում, բայց կարող են առաջանալ որոշ սնկեր: Կարագը ունի բարձր կալորիականություն, բաղադրության մեծ մասը կազմում են լիպիդները, պարունակում է ածխաջրեր, նատրիում,



ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀՈՒՐՎԱԳՆԵՐԸ
ԱՆՍԱՆԸ ԾՌԵՐԸ ԳՆՅՐ ԲՈՒՆԱԶԵԼ
Կազմումիստ
Հայկ Միսրոսյան(օտարված)
Պարին Մանուկյան(Երև հոգևոր, հոգեբանական գիտությունների թեկնածու)
Մուսաբեկ Մարտիրոսյան (Կոլիտի վաստակավոր գործիչ, երաժիշտ)
Մարին Բաղդասյան (Ազգային, պատմական գիտությունների թեկնածու)
Ռոզա Չոլիանկյոյան (բանասեր, բանաստեղծուհի)
Մատիլդ Եղիշարյան(մանկավարժ, արևելագետ)
Նայիրա Թադևոսյան (Գյումրու թիվ 1 ավագ դպրոցի տնօրեն, մանկավարժ)

կալիում, երկաթ, մագնեզիում, A, B1, E, PP, C վիտամիններ:

Այսպիսով՝ հայկական էպոսի դրուցագուցները՝ Մասնա տերերը, առաջին հերթին մտածում են իրենց ժողովրդի բարօրության մասին: Նրանց ուժ ու զորություն էին տալիս հայկական հողը ու ջուրը, ավանդական ուտեստները, որոնք այսօր էլ հայկական խոհանոցի անբաժան մասն են կազմում: էպոսի հերոսները հյուրասեր են ու չեն սիրում մեծակ հացի նստել: Իհարկե, նրանք ուժ են ստանում հայկական կերակուրներից, հող ու ջրից, բայց նրանց համար ամենակարևորը հոգևոր սնունդն է, որ ստանում են Մարութա Սուրբ Աստվածածին վանքում աղոթքով ու Աստծո օրհնությամբ:

Լյուդմիլա ԴՎԻԹՅԱՆ
Գյումրու թիվ 1 ավագ դպրոցի
աշակերտուհի
Գիտական ղեկավար՝
Լալա ԳՐԵԻԿՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզային գրադարանի արևմտահայերենի կայքէջի (arevmtahayeren-shmg.am) նախաձեռնություններից մեկը արևմտահայերեն բանաստեղծության փառատոն կազմակերպել էր, որին մասնակցելու ցանկություն էին հայտնել աշխարհի 15 երկրների 34 ստեղծագործողներ:

Առջանց փառատոնն անցկացվեց մարտի 21-ին՝ Պոեզիայի միջազգային օրը: Փառատոնին հետևելու համար գրադարան էին հրավիրվել մարզի մշակութային, կրթական և այլ ոլորտների ներկայացուցիչներ, մասնավորապես ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ա. Հայրապետյանը, ՀՀ գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ Ա. Կարապետյանը և ծնունդով շուշեցի բանաստեղծ Ռոբերտ Եսայանը: Ներկայացված էին նաև դպրոցականներ, մանկավարժներ, ինչպես նաև ընթերցողներ և գրադարանի աշխատակիցներ:

Ա. Կարապետյանն առաջարկեց մինչև տարեվերջ փառատոնին ներկայացված ստեղծագործությունները պարբերաբար տպագրել ՀՀ Շիրակի մարզային բաժանմունքի «Եղեգան փող» պաշտոնաթերթում:

Փառատոնի ընթացքին հետաքրքրությամբ և ուշադրությամբ հետևում էին նաև ԿԳՄՍ նախարարության Մշակութային ժառանգության պահպանության վարչության աշխատակիցները (Նազիկ Հովսեփյան, Արմեն Սարգսյան, Տաթևիկ Սուքիասյան): Այսուհետ մեր թերթի համարներում կներկայացնենք փառատոնին մասնակցած սփյուռքահայ բանաստեղծների գործերից:

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

ՀԱԼԷՊ. ՆԵՐՔՈՂ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (Հատուած)

Հայկա մնացած ընկերներու. Մարուշին, Յակոբ Նալպանտին

...Մարմինները ծակող փամփուշտներուն ցաւն բանաստեղծութիւնը կը ձեւափոխուի ու մարմինը ծակող վերքերուն պէս անոր արեան կաթիլները գետին կը հասնին: Պատերազմի ամբողջ ընթացքէն, անոր հասողութիւնէն, անոր տուած ցաւէն պիտի մնան միայն գերեզմանաքարերը ... որոնք արծազանքնէն վիշտի լռութեան: Մահուան խաղին մէջ ինկած դէմքերուն համար պատերազմը չունի սկիզբ, աւերակը, մահը, մահուան հետ ուշացած սպասումները կամ ձեւափոխող երանգները ոչ մէկ իմաստ պիտի տան թէքստին:

Ընկեր մը հարց տուաւ. ի՞նչու կը գրես Դամասկոսի մասին, ուրիշ մընէքնեքն Հալէպի քառսին մասին գրուած տողերը: Քառսին առջեւ ամէն ինչ անիմաստ է: Բայց եթէ կայ ուժանակի եւ սիրտի պայթում, ապա կայ նաեւ բառին պայթումը: Թերեւս առանց ճանապարհի մը տանելու: Այսպէս լեզուին ու անոր կուտակումներուն մէջ: Եթէ կայ պայթում մահուան տեսարանին մէջ, կայ նաեւ բառին պայթումը: Բառը սեւ ու ծանր մշուշէն պիտի թռչի: Ոչ մէկ բացատրութիւն անոր համար: Քառսին նկարագրութիւնը եւ այդ աւերակներուն հետ խօսելու փորձը ամէն օր պիտի մտնան: Ծարժումին, արարքին, պայթումին հետ բառը պիտի պայթի: Խօսելու ձեւ է այս արարումը: Աւերակներէն դուրս գալու համար:

Իմ մարմնիս վրայ Արեւներուդ ու ճանապարհիդ յոյսը կայ Անոր, որուն համար մեռար դուն Եթէ ազատութիւնը բառ է, բաց թող Փրկէ քու բաժին ինկածը Վստահ եղի՛ր՝ այս գիշերէն ետք ցաւ պիտի չմնայ Նորէն քաղաքը իր աչքերը պիտի բանայ Նորէն մահէն պիտի ելլեն բոլոր մեռելները...

Նորէն պիտի քալեն դէպի արեւներու ժամանակը: Որ տեղ չէ, ո՛չ կայարան, ո՛չ քաղաք, ո՛չ ամրոց... Աղօթքդ բեր ակամջիս Վերջին մասին եւ երգեր լսեցի Հին եւ նոր աղօթքներ

Հոն փորեցին խոյանքներ Քու պատերուդ քսեցին հեռուէն բերուած աղօթքներու մասնիկները...

Դարձան քու անունդ, դարձան քեզմէ: Երկրէ երկիր, քաղաքէ քաղաք քեզ փոխադրեցին:

Ել, Ել այս մահէն Ինչքան երկար տեւէ այս գիշերը

Ինչքան խուճեանաս Ու ինչքան ամր դառնան գրողները, Պիտի ելլես: Մարմնիդ վերջ տուողները օր մը, պիտի հեռանան քեզմէ...

Դուն ի՞նչ ընթացք ես Որ ջրամոյժ օրերուս մէջէն

Պուրս եկար: Դուն ի՞նչ լեզու ես, ինչ բառ ես Ինչ արգանդէ ես որ պատռեցիր օտարանքի իմ մարմնիս շուրջ հաւաքուած փոշին Ու դանդաղ

մտար երակներուս հաստ ու խոր ճանապարհին մէջ: Դուն ի՞նչ ամուսն ես, որ սպանցեցիր մոլուցքը սիրոյ եւ ատելութեան:

Ըսէ դուն ի՞նչ արիւն ես, Որուն կաթիլները ինծմէ ու քեզմէ հոսեցան

Իմ հեռացումը եւ պապակը հողերուդ եւ գետնին մէջ ցանուած վիշտդ է, որ կ'աճի:

Ան պապակն է արգելքներէն անցնելու ճիգին, ուր չկան ո՛չ սահմաններ, ո՛չ կանաչ սաղաւարտներ

Եւ ո՛չ վերարկուն իրենց ուսին նետած դիպուկահարներ ու մարդասպաններ:

Ինծի ըսին անունդ ինչ է: Մեծարեցի միմոսն եմ ըսի: Ինծի ըսին ճարպիկ մըն ես:

Ըսի կոր քիթով Ձահրատին պատկերները փակցուցած եմ մեր տան բոլոր անկիւններուն, որ բառը

մերտան պատերէն խոյանայ: Ըսին բանաստեղծութիւն մի գրեր

Եւ լռեցին: Պէտք է լռել-պատուիրեցին:

Ինծի ըսին սիրէ խաղաղութիւնը ու տան ծաղիկները ջրէ:

Պատերազմը, ըսի, որ կը կրեն, պիտի լեցնեն սեւ նայլոնէ տոպրակներուն մէջ ու խեղդեն: Այն պատուհաններուն տակ, ուր կատուները կը խօսին մեր մասին:

Պատերազմը ես եմ: Դուն ես: Մեր մահն է պատերազմը:

Մեր անկունող յիմար կտրած դէմքերուն այրուող քաղցն է պատերազմը:

Բառը, մեռնող կեանքը, մեռնող սէրը, մեռնող

Բառը, մեռցնող կեանքը, մեռցնող սէրը, մեռցնող պատերազմը: Մեզ սպաննող, մեզ հրկիզող պատերազմը:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Բառը, մեռնող կեանքը, մեռնող սէրը, մեռնող

Բառը, մեռցնող կեանքը, մեռցնող սէրը, մեռցնող պատերազմը: Մեզ սպաննող, մեզ հրկիզող պատերազմը:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Ան պապակն է արգելքներէն անցնելու ճիգին, ուր չկան ո՛չ սահմաններ, ո՛չ կանաչ սաղաւարտներ

Եւ ո՛չ վերարկուն իրենց ուսին նետած դիպուկահարներ ու մարդասպաններ:

Ինծի ըսին անունդ ինչ է: Մեծարեցի միմոսն եմ ըսի: Ինծի ըսին ճարպիկ մըն ես:

Ըսի կոր քիթով Ձահրատին պատկերները փակցուցած եմ մեր տան բոլոր անկիւններուն, որ բառը

մերտան պատերէն խոյանայ: Ըսին բանաստեղծութիւն մի գրեր

Եւ լռեցին: Պէտք է լռել-պատուիրեցին:

Ինծի ըսին սիրէ խաղաղութիւնը ու տան ծաղիկները ջրէ:

Պատերազմը, ըսի, որ կը կրեն, պիտի լեցնեն սեւ նայլոնէ տոպրակներուն մէջ ու խեղդեն: Այն պատուհաններուն տակ, ուր կատուները կը խօսին մեր մասին:

Պատերազմը ես եմ: Դուն ես: Մեր մահն է պատերազմը:

Մեր անկունող յիմար կտրած դէմքերուն այրուող քաղցն է պատերազմը:

Բառը, մեռնող կեանքը, մեռնող սէրը, մեռնող

Բառը, մեռցնող կեանքը, մեռցնող սէրը, մեռցնող պատերազմը: Մեզ սպաննող, մեզ հրկիզող պատերազմը:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Մեծ քաղաքներու կամուրջներուն տակ

Անյոյս մարդոց վերջին ճիչն է: Պատերազմը մեր մէջն է:

Խողովակներէն դուրս սարդոց: Քաղաքին մէջ տարածուող սատանայ պատերազմը:

Աղբ դարձող, ետ հողին դարձող

Նորէն ծնող, նորէն ծաղկող պատերազմը

որ «Յայտնութեան գրքի» տասնըջորսերորդ գլուխի

ճշմարիտ վկայութիւնն է: Կամուրջէն վար, շէնքերէն վար

պատերազմը: Այնչէնքերուն, ուր չկայ մեր փնտռած անցեալը. չկայ ճիչը:

Պատերազմը խաղաղութեան սենեակներէն խոհանոց հասնող թէյի իւղոտ բաժակներուն մէջ եղած

սիրոյ պակասն է: Պատերազմը:

Քամահրանքը, սպասումը, լքումը մարդոցմէ:

Սիրոյ անծերեւներէն ետք վերջին սպասումներուն

հզօր պահն է պատերազմը: Գերիբական այս գոյներէն եւ մեր որբութիւնը հրկիզող կրակէ լեզուն է պատերազմը: Մեր կոկորդներուն մէջ որբութեան բառը կ'եռայ:

Կեռայ եւ խիղճը, յաղթելու վիշտը:

Ընը, սա պատերազմը ըլլար մեծ մօրս սեւ ռատիոն, ու ես առանց զոհ առնել տալու փակէի բոլոր

ալիքներն անոր եւ հինալի ափսէին վրայ դրուած երեք խնձորները տայի-բաժնէի: Լուրերը բոլոր, թերթերը-ռատիօն լռէին ընդմիջտ:

Ու ռատիոյն -սեւ մեծ մամալի, լսուէին երգեր, ոչ լուրեր արկի ու պայթումներու: Վիշտի պարին մէջ, պարը վիշտին մէջ պատերազմը: Եւ բողբոջ միասեռակներուն, որոնք քամահրանքով կը հեռանան:

Պատերազմը սեւ է սեւ ագռաւներուն պէս, որ կանցնին մահէն: Ու կը ճամբորդէն հզօր գերեզմաններու վրայով:

Անոնց համար պատերազմը, որ հեռացան:

Անոնց համար պատերազմը, որ զոհուեցան:

Իմ մէջ եղող պատերազմը:

Աղոթք մի երևոյթ է, որտեղ միաձուլվում են շունչը, միտքը, բառը, մերթին ուժն ու աւուրան:

Մարդու տեսակը մեկն է... իրողություններն ու ընկալումներն են տարբեր:

Բնության նյութը ավելի է գեղեցկանում, երբ մատուցվում է մտքի և վառ երևակայության թռիչքով:

Վրդույնը և՛ շատ քաղցր է, և՛ շատ դառը:

Մնացական ՍՈՒՐԱԳՅԱԼ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ

ՀԱՎԱՍՔ

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՎԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ



Մնացական Սուրադյանի «Հավատք» /Համակարգված հավաքական միտք/ (2022թ.) ժողովածուն նախորդի հավելումներով հրատարակում է:

Այս գրքով փորձ է արված հավաքական ու համակարգված մտքերով ու բանաձևերով ընթերցողին ուղղորդել և ոյուրինացնել նրա խնդիրը իր իսկ հավատքի տաճարը կառուցելու՝ հիմնվելով բնության օրենքների վրա:

Հաղթանակող ժողովրդի զավակներն իրենց արյան մեջ կրում են ազգային գաղափարախոսության կողմը:

Հայ ժողովուրդն իր գոյության հազարամյակի ընթացքում այն հղկել, բյուրեղացրել է, որն էլ ներդաշնակվում է համամարդկային

բարձրագույն արժեքներին: Մեր մշակութային ԴԻԹ-ն առողջ է: Մեր ազգն իր գոյությամբ ընդարձակում է տիեզերքի բարոյակալության սահմանները:

Ուրեմն որո՞նք են հայ ազգի մտածողության մեջ այն սահմանումները, այն աքսիոմները, որոնք ճշգրտվել ու ճշգրտվում են ժամանակի գոյաբանական հոլովություն:

Մնացական Սուրադյանի «Հավատք» գիրքը ինքնատիպ ձեռնարկ է այս մասին, մի ձեռնարկ, որի անհրաժեշտությունն առավել ևս կարևորվում է այս հակասական և մեզ պարտադրող ապագային ժամանակներում:

Հեղինակը թե՛ պատերազմական և թե՛ խաղաղ ժամանակների ազատամարտիկ է (հոգով՝ մար-

տիկ, մտքով՝ ազատ), բնականաբար նրա արյունը առաջնայնորեն է հոսում հայոց համագային երակներով...

Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երկնքի ցողը կարծես օրհնանք լինի բնապաշտի համար:

Բնության նյութը ավելի է գեղեցկանում, երբ մատուցվում է մտքի և վառ երևակայության թռիչքով:

Հավատը մարդուն թևեր է տալիս:

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: